* 1678 մարտ 27 - Pietro Bedik-ը իր նամակով ուղղուած կարդինալներին, հաղորդում է, որ իրեն են դիմել Նախիջեւանից Վիեննա եկած 3 հայ դոմինիկեաններ (P. Gregorio Mattia, Fr. Bartolomeo Nazaria et Augustino Bageczi)՝ խնդրելով միջոցներ ձեռք առնել այս օրէնքի դէմ (SC Armeni, vol. 3, f. 14rv),
* 1679 marzo 1 - Pietro Bedik-ը իր «Relazione»-ով խնդրում է պապից ու կարդինալներից միջամտել՝ վերացնելու այս օրէնքը, այլապէս Նախիջեւանի քրիստոնեաները բոլորը մահմեդական կը դառնան (SOCG, vol. 472, f. 203r-206v)
* 1679 Aprile 24 - P. Tommaso Pinaderense OP գրում է կարդինալներին, որ այս օրէնքի պատճառով միայն անցեալ տարի 250 հոգի մահմեդականացաւ, ու իր կողմից առաջարկում է որ օրէնքը կասեցնելու համար Պարսից Շահի առջեւ միջամտի Հալէպում Լուդովիկոս XIV-ի հիւպատոս François Picquet-ը (SOCG, vol. 473, f. 192, 193)
* 1680 - Sommario-ում խնդրւում է François Picquet-ի միջոցով միջնորդել Շահի առջեւ այս օրէնքով մահմեդականութեան բռնադատուած 60 քրիստոնեաների համար, որոնք պէտք է կորցնեն իրենց ունեցուածքը (SC Armeni, vol. 3, f. 251r),
* 1681 20 Մարտ - Ֆրանսիայի Լուդովիկոս XIV թագաւորը նամակով դիմում է Շահին՝ խնդրելով իր հովանաւորութեան տակ վերցնել Նախիջեւանի հայ կաթողիկէներին (G. Goyau. op. cit., pp. 291-292)
* 1681 octobr. 8 - François Picquet-ը Ապարաներից տեղեկացնում է Հաւատասփիւռի քարտուղարին, որ իր հեղինակութեամբ արգելեց ոմանց մահմեդականանալ (SOCG, vol. 484, f. 202-206),
* 1684 Agosto 24 - Ապարաներից Սեբաստանոս Քնաբը նկարագրելով այս օրէնքի հետեւանքով մահմեդականների օրէցօր աճող թիւը եւ այդ իսկ պատճառով սկսուած հայ կաթողիկէների արտագաղթն ու փախուստը, Ֆրանսիայի թագաւորի մօտ է ուղարկում Հայր Պօղոս-Մկրտչին, որպէսզի թագաւորից յանձնարարական գիր բերի ուղղուած Պարսկաստանի Շահին: Խնդրում է, որ նոյնը գրուի նաեւ պապի կողմից (SC Armeni, vol. 3, f. 450+453),